

ՄԻՏՔ ԵՒ ԶԳԱՑՄՈՒՆՔ

ԵՐՈՒԱՆԻ ՂԱԶԱՐԵԱՆՅՈՒ

«Մշակ»-ի № 13-ի բանասիրական լուսածուս, պ. Տ. Յաֆանյանիսան, վերջացնելով իւր խօսքը՝ պ. Ե. Մաղաթեանի վերաբերութեամբ, — դէպքից օգուտ է քաղում՝ մի երկու խօսքով «քննադատել» և իմ լուսածը, որ սուկեց «Մուրճ»-ի անցեալ տարւոյ № 12-ի մէջ՝ «Մոռացած խօսքեր» վերնագրով: Այդ լուսածում՝ եթէ ընթերցողը չիշում է, եւ աշխատել էի ծանօթացնել մեր հասարակութեանը՝ ռուսաց երկու նշանաւոր գրողների Լ. Տոլստոյի և Շէգրինի ունեցած հայեացքի հետ՝ «Ժամանակիս տիրապետող ոգու» վերաբերութեամբ: Թէև կարճ, բայց, եւ կարծեմ՝ բաւական որոշ կերպով՝ իմ վերոյիշեալ լուսածում արտայայտուում է այն միտքը թէ՛ Շէգրին և Տոլստոյ, չը նախելով իրանց գաղափարների և կարծիքների տարբերութեանը՝ երկուսն էլ միևնույն հայեացքով են վերաբերում դէպի մեր «Ժամանակի ոգին»՝ որ մեր ժամանակի մարդիկ, ընկած կուրտուրական լատաջդիմութեան կռից՝ բոլորովին մոռացել են իրանց մարդկային բարձր արժանաւորութեան լատկանիշիչները, մոռացել են, որ աշխարհիս հրեային խիղճ կայ, մարդասիրութիւն, հայրենասիրութիւն, ազնւութիւն և այլ զուտ հոգեկան վնճ՝ արժանաւորութիւնների կան, որոնք խկապէս կեանքի ծուծն են կազմում, առանց որոնց՝ ամենին ոչինչ բաներ են մարդոց մոտաւոր ահագին առաջադիմութեան սրտաշնորհը: Այս է եղել իմ լուսածի բովանդակութիւնը և միտքը:

Կամենալով ցուց տալ մեր հասարակութեանը թէ՛ որպիսի խորը մոտաւոր և հոգեկան տանջանքներ է պատճառում Լ. Տոլստոյին (մեր ժամանակի ոգին), թէ ինչպէս զբաղւած է ալդ հանճարեղ մարդը «խղճի», «սիրտ» և այլ մարդկային զգացմունքների խնդրով — եւ իմ լուսածում առաջ եմ բերել «Для чего люди одурманиваются»? զրւածքի ամիտի միտքը, որի մէջ ցոլանում է Տոլստոյի մարդասիրական ոգին՝ իւր բոլոր

